2340
L·X·5

ԼՈՅՍ

ՀԱՆԳԷՍ ԱԶԳԱՅԻՆ

կը հրատարակուի Չորեքշաբթի եւ Շաբաթ օրերը։ Տարեկան գինն է մէկ լիրա օսմանեան։ Մէկ թերթը 40 փարա արծաթ։ Նամակ կամ ո եւ է գրութիւն պէտք է ուղղել Առ. Մ. Թափամաճեան Կոստանդնուպոլիս, Մերձաւ Ջարշի Բիւշտի հՓհճեանի խանի տակ Մ. Կ. Սարըեանի տպարանը։

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 94 — 1880 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Վարչական կազմակերպութեան վրայ Ծրագրին վիճաբանութիւնն աւարտեցաւ և օրինաց կարգ անցաւ։

Ազգային Ժողովոյ Դիւանն այս մասին Ազգային Ժողովոյ որոշումն հաւանականաբար հաղորդած է առ Ս. Պատրիարքն և կամ այսօր վաղն հաղորդելով Ն. Սրբազնութիւնն ալ նոր պաշտօնէութեան ընտրութիւնը փութացնելու հոգ կը տանի։

Նոր պաշտօնէութիւնը շատ գործեր ունի անմիջական անօրէնութեան և արագ լուծման կարօտ, որ ներքին խնդիրները ըլլալուն՝ մեծ ստիպողութիւն ունին։

Ատոնց առաջինն է ազգային ներքին վերակազմութեան խնդիրն, որ արդէն շատ ուշ մնացած է, և սակայն ատոր լուծումը զօրաւոր ձեռաց կը կարօտի, և որ անյողդողդ կամք, արիութիւն և բարոյական աղդուութիւն կը պահանջէ։

Շատ ճշմարիտ է այս, վասնզի միայն թուղթի վրայ գրուած օրէնքները չեն որ զազգն յօրինապահութիւն կ'առաջնորդեն, այլ օրինաց անթերի գործադրութիւնն, յորում կը փայլի զազդը կառավարելու կոչուող մարմնոյն բարձր ու մաքուր բարոյականութիւնն, որ անզգալաբար ժողովուրդին ալ կ'ազդէ, եթէ ժողովուրդը դեռ զուրկ է զեղծիկ և վնասմ բարոյականէ, և եթէ ընկղմած է բարոյական այնպիսի մեծ թերութեանց մէջ, զորս սարկութիւնն ու տգիտութիւնը կը ճնին։

Ուրեմն նոր պաշտօնէութեան առաջին գործն է ժողովուրդն օրինապահութեան վարժեցնել։

Ասոր հետևութիւնը պիտի լինի վստահութեան վերադարձն, որ իրաւունք և արդարութիւն գործադրելով տեղը կուգայ։

Երկրորդ գործը պէտք է լինի դաստի-

արակութեան համար այնպիսի հիմնագիր մը պատրաստել, որ ազգային մանկտւոյն միտքը, սիրտն ու կամքը միանգամայն կրթելու ծառայէ. մէկ խօսքով՝ այդ հիմնագիրը պէտք է ղուտ ազգային դաստիարակութիւն ներչընչէ։

Թէ ի՞նչ է ազգային դաստիարակութիւնը. — մանաւանդ յօդուածով մը պիտի բացատրենք։

Երրորդ՝ մեր ազգային ամուսնական կեանքը պէտք է այնպիսի հիմանց վրայ հաստատել, որպէսզի բայքայման առաջքն առնու՝ ո՛րչափ որ հնար է, և փոխանակ տնաւեր քայքայման՝ ամուսնական կենաց քաղցրութիւնն ու վեհ բարոյականն ամրապընդէ։

Չորրորդ՝ առաջնորդութեանց արդի անկերպարան վիճակը պէտք է վերածել այնպիսի դրութեան մը, որ լիովին համապատասխանէ իր նպատակին, դաւառացնոց կացութեանն ու նոցա վիճակին։

Հինգերորդ՝ ազգային սեփականութեանց մեծ ու կենսական խնդրոյն համար պէտք է այնպիսի միջոցներ ձեռք առնուլ, որովք կարենայ Ազգն իրօք տէր լինիլ իւր սեփականութեանցն և անոնցմէ իրապէս օգուտ քաղել։

Ահա այս և ասոնց նման յայժ կարևոր և կենսական խնդիրներ կան, որ անմիջական և ազդու տնօրէնութեան կը կարօտին, և ահա նոր պաշտօնէութեան կը վերաբերի ասոնց նկատմամբ հարկ եղած ծրագիրներն ընդ հուպ պատրաստելով Ազգային ժողովոյ հաւանութենէն ետև՝ գործադրութեան դընել և անոնց անթերի գործադրութեանն աշխատիլ։

* * *

Ժողովուրդն ալ եթէ ունի ինքնաճանչութիւն, եթէ կը փափաքի իր ներքին վերակազմութեանն, ըստ որում առանց ատոր արտաքին ազատութիւնը մեծ բան չարժէր և հաստատ հիմ չունենար, և եթէ կուզէ ներկայ վերածնութեան դարուս մէջ բան մը ըլլալ և բանի մը նմանիլ, պէտք է որ օրինապահութեան փորձեր տայ, պէտք է որ օրինաւոր իշխանութեան հրամանացն հնազանդի, ինչպէս որ կ'ընեն ամեն քաղաքակրթեալ ազգեր, և պէտք է որ իւրաքանչիւր անհատ նիւթապէս և բարոյապէս ազակցի իւր վարչութեանն, որ օրինաւորութեան սկզբունքէ ծագումն առած է։

Ժողովուրդ և վարչութիւն ահա այսպիսի փոխադարձ պարտուց և իրաւանց գործադրութեամբ կրնան օգտակար լինիլ և ազգային արժանապատուութիւնը պահպանել։

* * *

Սուվէյշոյ Խնամող Կեդր. Պատ. Ցանձնաժողովոյ նոր չրջաբերականը՝ զոր հրատարակեցինք Հանդիսոյ վերջընթեր թուոյն, ընթերցողք հարկաւ տեսան և զգածուեցան անոր պարունակութենէն, որ աւելի մարդասիրական և զգայմանցը կը խօսի, և անգամ մ'ալ յիշել կուտայ մեզ մեր պարտականութիւնը գժբաղդ սուվէյշոյ նկատմամբ, որոց վրկութիւնը մեր ամենուս կարեկցութենէն և գթասրտութենէն կախեալ է։

Ուսալ երբ իրողութիւնը կը խօսի, այլ ևս պերճախօսութեան հարկ չմնար։

Գժբաղդ սուվէյշոյ տխուր վիճակն զմարդ ի գթութիւն չարժելու համար մարդկային ամեն ճարտարախօսութենէ չատ վեր է։

Աւելորդ է ըսել ապաքէն թէ ամեն հայու պարտքն է իւրովանն օգնել իւր տառապեալ եղբարցն և մուրայիկն անգամ իւր բերնի պատառէն մաս մ'ալ անոնց բաժին հանել։

* * *

Երուսաղէմայ վանուց 30,000 ոսկւոյ պարտքը բառնալու պաշտօն ունեցող Պատ. Ցանձնաժողովն ալ գործունէութեան և ի-

մաստութեան փորձեր տուած և արդէն դարձի ձեռնարկած է, բայց արուած տեղեկութեանց նայելով՝ չատ է ըսել թէ մեծաթոյ աղգայինք հեռի կը գտնուին եղեր տակաւին հարկ եղած ակնկալութիւնը նուիրելէ։

Եթէ ատոյդ է, մեր ազգային արժանապատուութեան բնաւ չհամապատասխանէր, մանաւանդ երբ՝ ի նկատ առնուի թէ յիշեալ Պատուարժան Ծանձնաժողովոյ ձեռնարկութեանը մէջ վերապահեալ այնպիսի օգուտներ կան, որ իրաւամբ մեր ամենուս համակրութիւնն ու քաջալերութիւնը կը հրաւիրեն։

Ծանձնաժողովոյ անդամք իրենց դիրքովն ու վարկումովն արդէն Ազգին կատարեալ վստահութիւնը կը գրաւեն, և իրենց ազգասիրական գործերովն հանրածանօթ եղած են։

Ա՛ռ այս ևս կը հրաւիրենք ազգայնոց ուշադրութիւնն և՝ ի նուիրատուութիւն կը հրաւիրենք։

Թաղական խորհուրդներն ալ պէտք է որ իրենց ակնկալութիւնը չդլանան և իրենց գրկուած հրահանգները ժուռթաջանութեամբ գործադրեն։

Ա. ԱՄԻՐԽԱՆԵԱՆՑԻ ԾՕԴՈՒԱԾՔ

(Շար. Ե վերջ. Տե՛ս էջ՝ 92)

«Մենք չարաչար կը սխալուինք, եթէ իբրև մեր լուսաւորութեան նշան ցոյց տանք մեր դպրոցներուն բերած վկայականները, կամ այլ և այլ գիտութեանց մէջ մեր աներկբայելի հմտութիւնը։ Դեռ զարգացած չը համարուիր չատ փողի տէր հարուստը, որ կառքերով է մեն գալիս, որ կարողանում է հիանալի ապարանքներում և հրաշալի ամարանոցներում անձկացնել իր կեանքը, առանց վարժապետներ ու վարժուհիներ ունենալ, գանազան լեզուներ խօսիլ, վաճառանոցից աղնիւ և թանկագին զգեստներ և խընկեղէններ առնել, բարակ ակնոց անցկացնել քթին կամ զլանաձև դատակ դնել. սորանք չեն լուսաւորութիւնը և զարգացումը։ Դեռ նա էլ չէ, որ մեկը այս բաները չունենալով և չանելով, սկսէ Դիոգինէսի կարասը մտնել, և մի տեսակ ճգնաւորական փիլիսոփայութիւն ծախելով, մեկ անկիւն քաշուած՝ ազգային ասպարէզին վրայ դործելը արհամարհէ և իր ինքնահաւան դէմակից ճառում և յախուռն դատողութիւններ ընէ սորա և նորա պակասութեանց վրայ և միայն հինների լաւութիւնները դրուատէ։

Սորանք և սորանցից պէս բաները չեն լուսաւորութիւնը, սրանք լուսաւորութեան և զարգացման զեղծումները՝ քարիքաթոյրանները են։

Զարգացումը պարտաւորութիւն կատարելն է։

Ոչ միայն պարտամուրհակը վճարելու կամ յանձն առածը ժամանակին հատուցանելը, այլ բարոյապէս խորհիլ և պարտք ճանաչել և ինքն իրան առանց ո՛ր և է արտաքին ստիպողականութեան կատարել ի՝ ներքուստ մղուած։

Ո՞վ և ո՛ր օրէնքն է Անգղիացիներին, Ամերիկացիներին և միւս լուսաւոր ազգերին ստիպում հաղարներ և հարիւր հազարներ տալ և մեռը մեկ ընչին «անյայտ» գրել աղքատների, որբերի, ծերերի՝ ուսանողների, հիւանդների, և ուրիշ չատ կարօտեալների համար։

Եւրոպայի և Ամերիկայի լուսաւոր ազգերը բարեգործական նպատակով ինքնակամ զոհաբերութիւններ իրենցի մեծ թիւ են ցոյց տալիս, քան թէ նոցա կառավարութեան օրէնքով առած տուրքերը։

Սակայն մեր Թիֆլիզը և անտարակոյս ուրիշ չատ քաղաքներ այս չափով չափելով

կը դանենք զրօ ասոիճանի վրա։ Ոչ մի որբանոց, ոչ մի հիւանդանոց, ոչ մի աղքատանոց, զրեթէ ոչինչ չկայ, կամ եղածն ալ մի օրինաւոր բան չէ։ Մէկ Հայ մարդ դեռ կեանքը. և չունչը իրանում հազիւ մի նշանաւոր բան կը տայ, մեռնելիս էլ որ ոմանք կտակում են, նա ալ ո՛վ գիտէ թէ իր ազգականները ժառանգութիւնից զրկելու նպատակաւ չէ։

Մեր մեծ և անխուսափելի պարտքն է վանայ մէջ ունենալ բարձրագոյն դպրոց։

Գոհունեամբ կը հրատարակենք հետևեալ դրութիւնները, զոր ուղղած է մեզ Դպրոցասէր—Հայուհեայ բարեպատակ ընկերութիւնը, և ազգայնոց աջակցութիւնը կը հրաւիրեմք։

. . . Խմբագրապետ . . . Լոյս պատուական լրագրոյն։

Օրթագիւղի Հայուհեայ Դպրոցասէր ընկերութիւնը կը խնդրէ Ձեզմէ որ բարեհաճիք տեղի մը չը-Նորհել հետևեալ տողերուն Ձեր ազդօգուտ թերթին մէջ, և կանխաւ իր չնորհակալութիւններն ընդունիլ, ինչպէս նաև իր մեծարանացն հաւատիքը։

Դպրոցասէր ընկերութիւնը խնդրած լինելով Ա-ժենապատիւ Սրբազան Պատրիարքէն որ նախագահութիւնը ընդունելու պատիւն ընէ իրեն, Նորին Սրբազնութիւնը բարեհաճեցաւ այդ չնորհքը ընել սոյն ընկերութեան. դի այն մեծ և վեհ հոգին որ ղժուենայն լսէն ու ընարիրը կ'ոգևորէ, և որուն լոկ անունը յինքն կը պարունակէ յառաջադիմութեան և անձնուէր աղգասիրութեան գաղափարը, ոչ երբեք իր խրախոյսը պակսած է որ և իցէ յառաջադիմական ձեռնարկութենէ։ Դպրոցասէր ընկերութիւնը այդպիսի վեհ Նախագահ մը ստանալու փառքն և պարծանքն ունենալով՝ իր անձանձիր և յարատև աշխատութեամբն պիտի չանայ արժանի լինիլ միշտ Նորին Սրբազնութեան բարձր հովանաւորութեան։

Դպրոցասէր ընկերութիւնը՝ որ նոր վարժուհիներ պատրաստելու ունեցած նպատակին համեմատ պանդուխտ և աղքատ Հայ աղջիկներ ձրիարար կը դաստիարակէ Օրթագիւղի վարժարանը տարիէ մը՝ի վեր, իր ձեռնարկութեան առաջին ընդարձակութիւն տալու բաղձանօք՝ որոշեց Պոլսոյ և իր շրջակայ գլխաւոր թաղերուն այցելութիւն ընել, և իրաքանչիւր Հայ ընտանիքէ տարեկան առաքը մը խնդրել 10, 5, 3, 1 դահեկանի, ըստ կոմսյ և ըստ նիւթական վիճակի նպաստաւոյ, ու ընդունած առաքին փոխարէն ընկալագիր մը մատուցանել որն որ Դպրոցասէր ընկերութեան կնիքը պիտի կրէ։

Ընկերութիւնը Ամենապատիւ Սրբազան Պատրիարքէն արտօնութիւն խնդրած լինելով այն խորհրդոյն գործադրութեան համար, պատիւն ունեցաւ Նորին Սրբազնութենէն հետևեալ հրամանագիրն ընդունելու զոր կը վաստայ՝ի լոյս ընծայել։

Դպրոցասէր ընկերութիւնը քաջայոյս է խրախոյս դանալ ազգէն իր սկսելու դրամական ճեռնարկութեան մասին, և սկսելու է բաւական մեծ գումար մը հաւաքել, ու զոյն ազգին վստահութիւնը վայելող սեղանաւորաց մէկուն քով զետեղելով՝ սոյն հաստոյթով Օրթագիւղի վարժարանէն զատ, կարողանալ նոյն իսկ Պոլսոյ մէջ Կեդրոնական վարժարան մը հաստատել, յորում տեղացի և պանդուխտ Հայ աղջկանք վարժուհւոյ պաշտօնը արժանաւորապէս վարելու համար պատշաճ դաստիարակութիւնը ձրիարար կարենան առանալ։

Եթէ ընկերութիւնը ազգին կոլմանէ քաջալերութիւն դանայ, ամենայն միջոց՝ի գործ պիտի դնէ կեդրոնական Պոլսոյ վարժարանը հետզհետէ պայծառացնելու, և միանգամայն իր նուիրական ազգային պարտականութիւնը կատարելու Հայ ժողովրդեան արագընթաց յառաջադիմութեան նպաստելով։

Այսու առթիւ Դպրոցասէր ընկերութիւնը իր խորին չնորհակալութիւնները կը մատուցանէ բոլոր սոյն ազգասէր անձանց՝ որոնք յօգուտ իր կ'աշխատին, և մանաւանդ Մեծ. Գէորգ Ալթոուլլահ, և Զարեհ Շէյմանեան էֆէնտիներուն որոնք ազգօգուտ անձնուիրութեան՝ գեղեցիկ օրինակը կ'ընծայեն։

Հայուհեայ Դպրոցասէր ընկերութեան

Ատենապետ — ԼՈՒՍԻԿ ՎԱՍԻԼԵԱՆ

Ատենադպիր — ՍԲՐՈՒՀԻ ՏԻՄՍԱՐ

ՉՈՒԱՐՃԱԼԻՔ

Ա Զ Դ Ե Ց

Ա. Մ. Մ. — Դուն ալ այս տարուան բոլոր յաջողութիւնդ վեց եղաւ։

Թէ որ Մէհմէտ—Ալի փաշայ խանէն մինչև Ս. Լուսաւորչայ եկեղեցին երթալու համար դժուարութիւն կը կրես, ըսէ մեզի, որպէսզի քեզի դիւրութիւն ըլլալու համար Լուսաւորչայ եկեղեցին Մէհմէտ—Ալի փաշայ խանը և այդ խանն ալ յիշեալ եկեղեցին փոխադրենք և կամ՝ Մէհմէտ—Ալի փաշայ խանէն մինչև Լուսաւորչայ եկեղեցին երկաթուղի մը չինենք,

Ա. Յ. Ն. — Դուն ալ թէպէտ տարիքով ծեր, բայց եռանդով երիտասարդ ըլլալուդ՝ ուր որ ալ գտնուիս, 'ի Մէջագիւղ և կամ 'ի մեծ – կղզի, չունչդ չիտակ Ազգային ժողովարանը կ'առնես, ուշադրութիւն ընելով որ մի զուսպ ախտաղ քեզի դէմ ապտուտիլ։

Ապրիս։

Ա. Տ. Ե. — Դուն ալ քու պարտականութիւնդ ճանչցող երեսփոխան մ'ես, և կը խօսիս համոզելու համար այնպիսի վեհ պերճախօսութեամբ մը, որ եթէ ընդդիմախօսդ չհամոզուի, ժողովն ալ թէզը մտնելով քու կարծիքդ անոր դլուխը մտցնելու կը ջանաս, թէև անոր դլուխը փոքր ըլլայ և կամ ընդունակութիւնը նուազ։

Ա. Մ. Գ. — Դուն ալ արհեստիս նշանագի խօսող ըլլալուդ՝ բերանդ անխօսութեան վարժեցուցեր ես։ Մակ—քարի այտլման ուխտի գնա։

Ա. Ա. Գ. — Առեղծուածութեան մէջ թէպէտ անունդ երեսփոխան նշանակուած է, բայց գրեթէ ժողովարանը տեսնելը թերևս հրաշք մը համարուի։

Դատարաններու մէջ պերճախօսութիւնդ եկուր բիչ մ'ալ Ազգային ժողովին մէջ փայլեցուր։

Ա. Ն. Օ. — Ժողովրդեան ամիրայի մը զուտ կին բնաւ ներելի չէ ժողովուրդին ներկայացուցիչն ըլլալէ հեռու կենալ. ուստի 'ի դիւանէ կ'աղաչենք քեզի, մի բարեհամբաւ ժողովրդեան, ախտաղ պարապ մի թողուր երբէք։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Տ. ՍԷՐՎԻԶԷՆ

Բարեճաշ հասակով և բարձր մտօք մարդ մը, որ Մենուոլի տարիքին և իմաստութեանն հետ Տելֆիսթայ աչխոյժն ու եռանդն ալ ունի իր վրայ, այնպէս որ վինդը իւր գործէն դատողը կ'ըսէ, ահա ասիկ անձ մը, որ ծերի պէս կը խորհի և երիտասարդի պէս կը գործէ։

Թանկագին բան մը կորնչնոզի պէս՝ ճանթան դացած աուենն աչքը գետնէն չզատեր։

Ո՛նանք կ'ըսեն թէ այս բանն իրեն սազբուելու համար դարցած է, բայց որովհետև կարծելն ազատ է, ես ալ կ'ըսեմ թէ ոտքը սխալ տեղ չդնելու համար աչքն անոր վրայէն չվերցնելը, ուստի ոտքն աչքին հոլիզոնական է, և հետևաբար կ'երևայ թէ պատճառն այս է որ Տօրթէօր Սերվիչէն իւր հաշիւները մէջ կամ բնաւ չսխալիր և կամ, իրրև մարդ՝ խիստ քիչ կը սխալի հաւանականութեամբ, որովհետև անսխալ Պապ չէ։

Ո՛նանք ճեռքով ճակատնին կը չփեն, երբ իրենց յիշողութեանը մէջ բան մը կորսուի, և թուղթի կտոր մը հետ կը խաղան և կամ Մերեդիթի էֆէնտիին պէս զմելով փայտի կտոր մը կը տաշեն, երբ մեծ խնդրոյ մը կամ հանգոյն մը վրայ խորհին, սակայն Տօրթէօր Սերվիչէն ոչ այս կ'ընէ և ոչ այն, այլ բոլոր ուշով յիշողութիւնն իրեն օգնութեան կոչէ, ինչպէս խմբագիր մ'ալ իւր տուփերը կը թղթատէ, երբ քանի իրեն ըսէ՝ տպագրութեան, թուղթի, մելանի, դրաշարի, վաւերի, տրուիչի և վաստակի համար ատակ չկոչ։

Կը հետևի ուրեմն թէ քոլոնիան ուղղութեան օգտակար է, և որովհետև Սերվիչէն էֆէնտի ամուրձ ապրելու գաղտնիքը քաջ գիտէ, և որովհետև սեռնելով որ մարդիկ ուղղ ապրելու ճանթան չեն գիտնար համար չուտ կը մեռնին, իւր աղգակցացն այս մասին կարևոր ծառայութիւն մ'ընելու նպատակաւ «Մանկաստածութիւն» անունով դիրք մը չինած ու հրատարակած է, բայց ատոր մէջ քոլոնիական օգտակարութեանը վրայ խօսած և ըսած չէ թէ քոլոնիան ալ խիստ օգտակար է, ինչպէս և սոփիաթեան, զոր բժիշկներն իրրև մանանայ՝ ամեն տեսակ հիւանդութեանց համար կը դործածեն։

Այդ դիրքն անսխալ դէղագիր մ'է, որուն հեղինակ մայրերն ուղղ և կայտառ կը մեծցնեն իւ-

բենց զանկներն ու երբէք չեն սխալիր , որովհետև անսխալ փանասկ է ։

Սէրվիչէն կֆէնտի՝ իրրև բժիշկ՝ ազգին հիւանդութիւնները դարմանելու պաշտօնին ալ կոչուելով՝ լաւ մը քննէլէ , զննէլէ և քօնսօլիօ ընէլէ ետև՝ վճռեց թէ անոր հիւանդութիւնը վարչական սկզբունքին մէջ է , ուստի իր քօնսըլթօյի ընկերներուն հետ համաձայնութեամբ դեղագիր մը պատրաստեց ։

Այս դեղագիրը մեծ համբաւ և ընդունելութիւն գտաւ և Ազգն ալ պատիւ մ՚ընելու համար անոր անունը Սահմանադրութիւն դրաւ , բայց որովհետև այս նոր դեղագրին դեղերը դժուարաւ մարսող նիհար ստամոքսներ ալ կային , ուստի ամենը մէկէն մաքաննելով՝ ոտք ելան անոր դէմ , Հիւսկրատին բողոքեցին , ամբաստանեցին , դատ վարեցին , նեղացան , պոռացին ու պոռչտեցին , և երդուան յանձինս իւրեանց՝ ոչ ուտել և ոչ ըմպել մինչև որ այն դեղագիրը չպատռեն ։

Հիւսկրատ խնդիրը լաւ մը քննէլէ և անալիզ ընէլէ ետև՝ տեսնելով որ Տ. Սէրվիչէն կֆէնտիի դեղագրին՝ որ ուրիշ ճարտար բժիշկ ալ խորհրդոյը պատրաստած է , վճռեց թէ տակաւ ստամոքսներու ալ կը յարմարի և ատ հասարակ օգտակար է ։

Ասոր վրայ ստամոքսները լեզուներնին քաշելով տեղերնին նստան և վերջապէս իրենք ալ խոստովանեցան օր մը թէ Տ. Սէրվիչէն կֆէնտիի դեղագիրն իր բնաւորութեանը պէս կտրուկ է , ինչպէս է միրասը , որ ճարտար ձեռքի մէջ ամեն բան ձեւով կը կտրէ ու կ՚անցնի , սակայն կոյներէնը և սանդոյ երկար բարակ մասածելու միրասին նիհարին վրայ թէ արդեօք երկա՞թ է , թէ պողպատ , այլ կը կտրէ , որովհետև միրասին պաշտօնը կտրել է միայն ։

Այսքան բացատրութիւններով կարծեմ կրցինք հասկցնել թէ Սէրվիչէն կֆէնտի փօրմալիթէի մարդ չէ , այլ գործի մարդ է և գործը մարդին ասելի կը սիրէ ։

Հարկաւ չհետևիր թէ Սէրվիչէն կֆէնտի մարդանդրօք է ։

Ընկերականութիւնը շատ կը սիրէ , ինչպէս նաև համով հատուկ զուարճախօսութիւնը , և եթէ ուղէ բարեկամներէն մէկուն պահատութիւնն իրեն ըզդացնել , կըսիկ զուարճարանութիւն մը կ՚ընէ , ուրուն մէջ մարդ իր պատկերը կը տեսնէ , սակայն սիրտը կսիծալու ։

Սէրվիչէն կֆէնտիի մարքն այնքան մեծ է , որ կ՚ըսուի թէ իր պատին մէկ մեծ մուն անոր հետ մռայլներ է բնութիւնը , ուստի իր դէմքը տեսնողը կ՚ըսէ անշուշտ թէ թշուառական ծառաներն իրեն դարձեալ մեծ տհաճութիւն մը պատճառեր են ։

Սէրվիչէն կֆէնտի իր գործոյը զուարճի է ։

Ոմանց պէս իր գործոյը , կարծեցին ու սիրզբանքին վրայ բնաւ անվստահ աչքով չնայիր , վասն զի բանի մը վրայ համոզուելէ ետև՝ ալ անկէ դիմաբաւ ետ չդառնար , և չտեսրու վրայ ալ դիմաբաւ չվստահիր ։

Իրաւունք ունի , որովհետև մարդ ո՛րչափ ըսկզբունք վախէ , այնքան չուտով կը հիննայ ։

Ահա այս պատճառաւ է որ Սէրվիչէն կֆէնտի միշտ անվախճան է , այսինքն , սկզբունքով գալով , սկզբունքո՛վ , ըսր՝ մուսյմանմը տեղ մը չձգելու համար կ՚ըսեն թէ ցեղեկները քթախտի տուփին մէջ և գիշերները ալ բարձին տակը կը պահէ , և եթէ օր մը վրան առնելու մոռնայ , ատքերն յուսոյ չեն երթար և իրեն դէմ կ՚ապստամբին , բայց սիրզբանքն իրմէ չեն ապստամբիր երբէք , որովհետև ծուռ չեն ։

Իր ազդասիրութիւնն ալ սկզբունքով է ։

Ազգն այնպէս կը սիրէ , ինչպէս հայր մը իր զաւակն , որ երբ պահատութիւն գործէ , չհիդար երևնին , այլ խրատելով կը պատժէ , որպէսզի չըշահանայ ։

Սէրվիչէն կֆէնտիի դեղագրին մէջ՝ ստամոքսներու ապստամբութեան պատճառաւ համբաւաւոր դիանագէսի մը գրչին ծայրն իրր թէ իրաւարարի դեր կատարելու եղնելով՝ օսքիաթոյի տեղ տրպէնիր դրաւ , որով հիւանդը փոխանակ ապաքինելու՝ ծանրանայաւ ։

Սէրվիչէն կֆէնտիի սրածայր աչքը տեսնելով որ այս անգամ ալ հիւանդին չ՚ապաքինելուն պատճառը պահենքն է , դեղագիրը բարեփոխելու ելաւ , բայց հիւանդին տիրոջը հատանութիւնն առած չ՚ըլլալուն՝ ընդդիմութեան պատահեցաւ , և անպատմ պատերազմ հրատարակեցաւ , թէպէտ ատեն անցնելէ ետև հիւանդին տէրն համոզուեցաւ թէ այդ դեղագրին իրօք բարեփոխութեան պէտք ունի ։

Սակայն Սէրվիչէն կֆէնտի ա՛լ հիւանդին այցելութիւն տալէ դադրեցաւ և երբ քանի մը տարի յետոյ դարձեալ իր գործակցութիւնը խնդրուեցաւ , այսինքն , երեսփոխան ընտրուեցաւ , ըսաւ թէ՝ ինքը չկրնար դարմանել պէտք է տօքթէօր Մունճէրին կանչուի ։

Ահա այսպէս Սէրվիչէն կֆէնտի երկար տաեն բացակայ մնաց ազգային պաշտօններէն , այլ ա՛չ ղա-

ցուած է, որովհետև չէր գլուխը այն ամեն ծառայութիւնը՝ զոր կը մատուցանէր ի հարկին։

Սէրվիչէն էֆէնտի և իրեն դէմ պատերազմ հրատարակողները փոխադարձ իրաւունք ունէին, կ'ըսեն ոմանք ու այսպէս կը պատճառաբանեն թէ՝ Փօրմալիթէն չատ անգամ օգտակար նպաստակներն հետուն կը մղէ, իսկ ատոր հակառակը պնդողը ալ կ'ատարկեն թէ՝ ամեն խնդրոյ մէջ ալ Ազգին հաւատարմութիւնն հարկաւոր է, որպէսզի Ազգին վստահութիւնը չարաչար գործածելու մէջ չհ ունեցող անձինք պարագաներէ օգուտ չքաղեն։

Կարծենք համոզուածյան ընթերցողը թէ խընդիրն սկզբունքի վրայ էր, որուն՝ Սէրվիչէն էֆէնտի զոհ կուտայ Փօրմալիթէն, վասնզի, ինչպէս ըսինք, Փօրմալիթէի մարդ չէ, և կամ ուրիշ կերպով ըսելով՝ սխթէմաթիք մարդ է և ո՛ւր որ գործ աւելի խօսք կայ, հոն ինք գործ չունի։

Ատոր ապացոյցն այն է որ երբ խնդրոյ մը մէջ յապծուի, ա՛լ բնաւ չխօսիր և չխօսելով կը պատժէ պարտութիւնը, որպէսզի ուրիշ անգամ չյապծուի։

Սէրվիչէն էֆէնտի անցած տարի պայմանաւ ընդունեց երեսփոխանութիւնն և հպիւ երկու երեք անգամ գալէ և իր դեղպիրն Աղբպային ծաղկոյ ընդունել տալէ ետև՝ մէյմ՛ալ չերեւցաւ։

Ատոր պատճառն հարկաւ օր մը պիտի բացատրէ ու իր բազմամեայ ազգային կեանքի փորձառութեամբն ըսէ այս անխռով մշակը թէ՝ «քիչ խօսք և շատ գործ» հարկաւոր է այս ազգին։

Սէրվիչէն էֆէնտի ազգային հիւանդութեան բուն պատճառը բառնալու համար 1867ին ուզեց այնպիսի ազգաւ դեղ մը տալ, որով Ազգը պիտի վերկուեր իր հիմնական հիւանդութենէն։

Այդ դեղն էր կառավարութեան միջոցաւ ամեն մէկ Հայ անհատէ տարին 6 ղուրուշ տուրք առնել՝ ազգին պէտքերն հոգալ և ուսեալ, բարեկիրթ և օրէնազէտ եկեղեցականներ և վարժապետներ հասցնել, ասկոյն ինքնակոչ փիլիսոփաներ ատոր մէջ իրր թէ բռնութեան գործ նշմարելով՝ սկզբունքը միջոցին ղրկեցին։

Ոստի Սէրվիչէն էֆէնտի մեծ իրաւունք ունի «քիչ խօսք և շատ գործ» ըսելու, բայց իրաւունք չունի իր աթոռը պարապ թողելու, որուն վրայէն այնքան կորովով և ճարտարութեամբ խօսած է իրեւ երեսփոխան։

ԱՄԿԻ ԱՆԿԻ

Մայրի՛կ, ինչո՞ւ կուլաս կոր. —

— Տղա՛ս, ասօր սիրտս դէշ է, երեկ դիշեր երազ մը սեսայ.

Մայրի՛կ, չ'ըլլայ որ Թէրճէմանը—Հագիգաթին խանդարեալ երևակայութիւնն է։

* * *

Քուզում Մարտիրոս ալա, սա Օսմանլըի գրածներուն լո՞նչ կ'ըսես. —

— Ա՛ռ ալ հարցնելու բա՞ն է, ջուրը տուր երթայ.

Եա ջուրը չի տանի՛նէ՛. —

— Թէրճէմանը—Հագիգաթին կռնակը տուր, ան կը տանի.

Հապա Թէրճէմանը—Հագիգաթը ի՞նչ ընենք. —

— Նուսխա կ'ընենք ու իր Դանիէլ Պաղտասարօֆին ճիտը կը կախենք։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օդը աւրուեցաւ և անձրևներն սկսան (տանուէրներուն և քունտուրաճիներուն ախքը լայ). ցորենն առատ է. հացին գինը աճընցաւ. 75 փարայ. քէօմիւրճիներուն երեսը միշտ նոյն է, այսինքն՝ չխնդար. քաղաքիս թէքլիֆսիզ միսաֆիրներն անհանգստութիւն չպատճառելու համար աւելի դիշերները այցելութիւն տալու կ'ելլան և ո՛ւր որ աւելորդ բաներ դանեն չախայի համար հետերնին կը տանին, հարկաւ վերադարձնելու պայմանաւ. օխտը շաբթուները մօտենալուն՝ նշանածնեբուն երեսը կը խնդայ և նշանածուներուն սիրտն ալ թըբըր թըբըր կը նետէ. ձմեռուան մօտայի պատճառաւ կանայք իրարանցումի և էրիկ մարդիկ ալ մոմոտքի մէջ են։

Ահա ասոնք են օրուան ներքին լուրերը։

Ա Զ Դ

Կայսերական իրատէով և Կ. Պոլսոյ Եւրեւելի պանդանեորու երաշխաւորութեամբ ի նպաստ Հայաստանի սովելոց հաստատեալ վիճակահանութեան տոմսակներէն՝ որոց առաջին թիւը պիտի չահի 100 000 և միւսները ալ տասը հազար և երկու հազար ֆր.ևէն, կը ծախուի Կ. Պոլիս վարագճը խանին դիմացը թիւ 52 Էքսերճեան Մեծ. Պօղոս էֆէնտիի սեղանաւորութեան խանութէն ի դին մէկ ֆրանգ։

Ծիչեալ վիճակահանութիւնն առաջին անգամ հոկտ. 1 ին (ըստ Ն. Տ.) և երկրորդն ալ 1881 Մայիս 1 ին պիտի քաշուի հրապարակաւ։

Առաջին վիճակահանութեան թիւերը երկրորդին ալ պիտի մասնակցին։

Նորայրի Գաղղիերէն—Հայերէն բառարանին տասնուհինգերորդ թերթն հրատարակեցաւ, որոյ մէջ Այբ դիրն աւարտած է և Պէ կը սկսի։ Այսուհետև ամէն չաբաթ օր կանոնաւոր կերպով կը հրատարակին թերթերն։ Վաճառման գլխաւոր տեղին է Ֆըրէնկեան դրավաճառանոցը, Ուզուն չարշը, թիւ 362։ Որոնք որ կը փափաքին բաժանորդ գրուիլ մէկուկէս օսմանեան ոսկի կանխիկ վճարելով, կրնան դիմել Պ. Ֆրէնկեանի։ Ի դիւրութիւն հասարակութեան թերթերը կը վաճառուին նաև Գալաֆեան և Ղուկասեան գրավաճառաց քով, ինչպէս նաև Արչակ էֆէնտիի թղթավաճառանոցը ի Ղալաթիա և Վայսի գրավաճառանոցը ի մեծ փողոցն Բերայի։

Գին իւրաքանչիւր թերթին 60 փարա արծաթ։

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Գրեց

ՆԱԶԱՐ Յ. ԳՈՐՈՑԵԱՆՑ

Ահաւասիկ ընտիր երկասիրութիւն մը, որով Մեծ. հեղինակն իւր ողջամիտ դաղափարներովը և մանրախոյզ հետազօտութիւններով խիստ մեծ ծառայութիւն մը կը մատուցանէ ազգային ամենէն կենսական, այս է դաստիարակութեան խնդրոյն։

Սոյն գործը 100 մեծադիր երեսներէ բաղկացեալ է, և գեղեցիկ տպագրութեամբ Պարտիզպանեան տպարանէն ի լոյս ընծայուելով կը ծախուի Եէնի—ճամի Զիլինկիրլէր ճատէսի, թիւ 24. Ղուկասեան դրատուներ։

Գին 5 ղրշ.

Ա Զ Դ

Կ. Պոլիս Մէրճանը Բիւշտի էֆէնտի խնդրեց դիմացը նոր բացուած «Իտարէ Լօգանթասը» ի ճաշարանապետը՝ որ Հայազգի մ'է, պատիւ ունի ծանուցանել արդոյ հասարակութեան թէ իւր ճաշարանը դիմող ամէն կարգի անձինք խիստ գոհ պիտի ըլլան թէ մատուր և խնամով պատրաստուած կերակուրներէն և թէ անոնց աժանութենէն։

Վերջապէս իւր յաճախորդները գոհ ընելու մասին ամէն կերպով չանք և աշխատութիւն ղլացած չէ։

Բաժանորդ ըլլալնեորու համար ալ մասնաւոր զեղչ կըլլայ։

ԱՐՏՕՆԱՏԷՐ Հ. Ե. ԴԻՄԱՔՍԵԱՆ

ԽՄԲԱԳԻՐ Մ. ԳԱՓԱՄՃԵԱՆ